ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԳԲՔԱ-LO-2021/14 ծածկագրով
ընդունված որոշման կատարման մասին

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» կարգի՝

- 26-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

- 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

- 28-րդ կետի համաձայն՝ պատվիրատուն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տրամադրում է ընդունված որոշման կատարման մասին տեղեկատվություն՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկատվությունը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում Անձը այն հրապարակում է տեղեկագրում:

- 29-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 28-րդ կետով սահմանված ժամկետում պատվիրատուի կողմից տեղեկատվություն չտրամադրվելու դեպքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձ մեկ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկագրում հրապարակում է հայտարարություն:

«Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի կողմից 04.03.2021թ.-ին ներկայացվել է բողոք:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 04.03.2021թ.-ին:

ք. Երևան, Մելիք-Ադամյան 1, հեռ. (+374) 11 28 93 26, էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru

Բողոքներ քննող անձի 05.03.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/3296-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 09.03.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

09.03.2021թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 համարի ծածկագիրը:

17.03.2021թ.-ին, 25.03.2021թ.-ին և 08.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.03.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.04.2021թ.-ին:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 08.04.2021թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 որոշմամբ որոշել է՝

«Անդրանիկ Գասպարյան» Ա/Ձ-ի կողմից 09.03.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/14 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ԷՋ ՋՕԸ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը և 16.02.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշումները:
2. բանակցությունների արդյունքում նվազեցված գնային առաջարկները դիտարկել որպես պայմանագրի ընդհանուր գին, իսկ պայմանագիր կնքելու դեպքում ներկայացված գնային առաջարկը դիտարկել որպես պայմանագրի ընդհանուր գումար:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացվել Կարգի 28-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը, այն է՝ կայացված իրավապարտադիր որոշման կատարման մասին:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ

ք. Երևան, Մելիք-Ադամյան 1, հեռ. (+374) 11 28 93 26, էլ.փոստ. gbqa_ohanyan@mail.ru